

Ց Ա Ն Կ

2011 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը
1	2	3
<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>1. Համայնքային բյուջեների եկամտային մասի ավելացում և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարվող ծախսերի մոնիթորինգի իրականացում</p>	<p>- սահմանել պարտադիր լիազորությունների իրականացման կարգերը, նորմատիվներն ու չափորոշիչները (քաղաքաշինության բնագավառ)                      - սահմանել համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման կարգերն ու ֆինանսավորման մեխանիզմները (սոցիալական ծառայության բնագավառ)                      - տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղական հարկերի մասով հարկային վարչարարության բարձրացում (2010 թ. ապրիլի 27-ի «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N ՀՕ-51 ՀՀ օրենքի կիրարկում)                      - իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսերի օբյեկտիվ կարիքների ուսումնասիրության և այլ չափանիշների վրա հիմնված, տեղական բյուջեների եկամտային մասի շարունակական աճն ապահովող միջոցառումներ (համայնքների բյուջեների ծախսերի եռամսյա և եկամուտների ամենամսյա մոնիթորինգ, վարչարարության բարձրացում, «Տեղական տուրքերի և վճարների հայեցակարգ»-ի մշակում)</p>
	<p>2. Հայաստանում տեղական ինքնակառավարման օրենսդրական բազայի և տեղական մակարդակում հանրային կառավարման արդյունավետության բարելավում</p>	<p>- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավում Համատիրությունների ու բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում իրավասությունների հստակեցման, մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացման նպատակով` ՀՀ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման և շահագործման ոլորտի բարեփոխումների 5-ամյա ծրագրի ընդունում, դրանից բխող միջոցառումների իրականացում</p>
		<p>- վարչատարածքային բարեփոխումների իրականացմանն ուղղված ուսումնասիրությունների շարունակություն և «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ»-ի վերջնական լրամշակման արդյունքում` մոդելային ծրագրերի մշակում                      - տեղական ինքնակառավարման ոլորտում վերապատրաստման ազգային ռազմավարության վերանայում: Տեղական ինքնակառավար-</p>

		ման ոլորտում վերապատրաստման կարողությունների զարգացում: Համայնքային ծառայողների կադրերի ռեզերվի կայացմանն ուղղված միջոցառումների իրականացում
	3. Հաստատված տարածքային զարգացման հայեցակարգից բխող և հակակոռուպցիոն միջոցառումների իրականացում	<ul style="list-style-type: none"> <li>- մարզերի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ համայնքային նշանակության տեղեկատվության հավաքագրում</li> <li>- մարզային զարգացման ծրագրերի մոնիթորինգի ներդրում և իրականացում</li> <li>- տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող վարչական հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով վարչական հսկողության իրականացման մեթոդական ուղեցույցի մշակում</li> <li>- «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման» ՀՀ ՏԿԼ-ի մասով միջոցառումների ծրագրի կատարման ապահովում</li> <li>- երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների լիարժեքության ապահովում</li> </ul>
	4. Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրություն և դրա կանխարգելման նպատակով առաջարկությունների ներկայացում	<ul style="list-style-type: none"> <li>- միջազգային տարբեր կառույցների պատվերով միգրացիոն հարցերի ամնչությամբ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և այլ կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների ուսումնասիրություն</li> <li>- ուսումնասիրության արդյունքներով անկանոն միգրացիան ծնող պատճառների և բացերի վերհանում</li> <li>- վեր հանված պատճառների և բացերի վերացման նպատակով առաջարկությունների ներկայացում</li> </ul>